ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇՄՈՎ



Վերջերս Մոսկվայի «Իզոբրազիտելնոյե իսկուստվո» («Կերպարվեստ») հրատարակչությունը 50 հազար տպաքանակով լույս ընծայեց ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի գծանկարների ալբոմը: Առաջաբանում ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Թայիր Սալախովը բարձր է գնահատում հայ նկարչի ստեղծագործությունը՝ այն համարելով բազմազգ սովետական կերպարվեստի նշանակալից դրսևորումներից մեկը: Խաչատրյանի ինքնատիպ արվեստն այսօր գիտեն Սովետական Միության տարբեր ծայրերում, նաև՝ արտասահմանում: Մոսկվայում և Լենինգրադում, Երևանում և Օդեսայում կազմակերպված նրա անհատական ցուցահանդեսներն ունեցել են անփոփոխ հաջողություն:

Անցած տարի ԱՄՆ-ի Դետրոյտ և Լոս-Անջելես քաղաքներում նկարիչը ներկայացրեց վեց տասնյակից ավելի իր գծանկարները, որոնցից շատերը ձեռք բերվեցին ամերիկյան թանգարանների կողմից:

Ալբոմը կազմող հեղինակ Միխայիլ Լազարևը ներածական հոդվածում համառոտակի ներկայացնում է Ռուդոլֆ Խաչատրյանի կյանքի ու ստեղծագործության ուղին՝ անդրադառնալով նաև նրա արվեստի բնութագրական կողմերին: Խոսելով տաղանդավոր նկարչի արվեստի ակունքների մասին, նա Վերածննդի վարպետների կողքին իրավացիորեն հիշատակում է մեր միջնադարյան մանրանկարիչների, գրքային գծանկարչության անգերազանցելի վարպետների լավագույն ավանդույթները:

Խաչատրյանի արվեստը դիտողին գրավում է գծի նրբությամբ և կատարման անմիջականությամբ: Պատահական չէ, որ նրան անվանում են «գծի բանաստեղծ»: Հասարակ մատիտի օգնությամբ նա հասնում է զարմանալի արտահայտչականության: Նրա աշխատանքներն իրենց մշակման կատարելությամբ հիշեցնում են հայկական խաչքարերը: Նկարչի համար չկան անկարևոր մանրամասներ: Նրա ուշադիր հայացքի տակ ամեն ինչ, լինի այն գեղեցիկ սանրված, թե հնաոճ հագուստի ծալք, ջերմանում է, կենդանություն ստանում:

Ռուդոլֆ Խաչատրյանի նախասիրած ժանրը դիմանկարն է: Վերջինիս մեջ և դրա միջոցով է նա արտահայտում իր ասելիքը, փառաբանում մարդուն, ստեղծագործական ընկիզբը մարդու մեջ:

Ալբոմում ներկայացված է նկարչի ստեղծած դիմանկարների մի սքանչելի շարք: Դրանցում պատկերված են մտածող, ստեղծագործող անհատներ, գիտության ու մշակույթի նշանավոր գործիչներ:

Դժվար է ներկայացված գծանկարներից առանձնացնել որևէ մեկը: Դրանք բոլորն էլ հեղինակի ինքնարտահայտություններն են և կրում են շնորհաշատ արվեստագետի անհատականության կնիքը: Հատկապես վերջին տարիներին ստեղծված աշխատանքներում առավելագույն չափով դրսևորվել են նկարչի ձիրքն ու վարպետությունը: Այդ նկարներից շատերն այսօր արդեն դասականացած գործեր են: «Կրնոջ դիմանկարը» (1973), օրինակ, դարձել է մայրության ու կանացիության մերօրյա խորհրդանիշ:

Յուրաքանչյուր նկարիչ, հատկապես դիմանկարիչը, իր ստեղծագործական հավատամքը լավագույնս արտահայտում է ինքնադիմանկարների միջոցով: Այս առումով բացառություն չէ նաև Ռուդոլֆ Խաչատրյանը: Նրա գծանկարների ալբոմը բացվում և փակվում է ինքնանկարներով, որոնցից մեզ է նայում արվեստագետ հեղինակը՝ կյանքի նկատմամբ իր կայուն սկզբունքներով ու գեղարվեստական աշխարհայացքով:

Պակաս հայտնի ու գրավիչ չեն նաև Խաչատրյանի նատյուրմորտները: Դրանք ևս աչքի են ընկնում իրենց հավաստիությամբ և անշուշտ իրերի հանդեպ նկարչի գորովալից վերաբերմունքով:

Վերջում հարկ է նշել, որ բարձրորակ տպագրության շնորհիվ (տպագրվել է Ֆինլանդիայում) ալբոմում զետեղված մոտ 100 գծանկարները հնչում են գրեթե բնօրինակների զորությամբ՝ ճշմարիտ արվեստի հազարավոր երկրպագուների պարգևելով անխառն հիացմունքի բազում պահեր:

ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ



«Դերասանուհին»:
«Նատյուրմորտ»:
«Վլադիմիր Մարյան»: